

Հեղինակ? — Տպագրութեան առաջին հնարողը՝ Յ. Գուտտենբերգը: Թարգմանեց տիկ. Մարգարիտ: Մոսկա, տպ. Մկրտիչ Բարխուդարեանի, 1890, փոքր քառածալ, 34 երես, տառ № 12, գինն է 15 կոպ.:

«Մուրճ»-ը առաջին անգամ չէ որ բողոքում է մեր թարգմանիչների ալս վատ սովորութեան դէմ, որ նոքա ծածկում են իրանց թարգմանած գրւածքների հեղինակների անունները: Եւ թէն ներկայ գրքուկի նկատմամբ հեղինակի անունը մի առանձին կարևորութիւն չունի, այնուամենայնիւ առիթը չենք ուզում բաց թողնել կրկին և կրկին բողոքելու այդ երևութի դէմ, որը արդէն սովորութիւն է դառնում մեզանում: Թարգմանչի անունից աւելի կարևորն է հեղինակի անունը:

Գրքուկը մի ցանկալի նպաստ է մեր նորաբողոք ժամանակին գրադարանին: Նիւթի ընտրութիւնը չաջողակ է, պատմութիւնը հետաքրքրական, ոճը սահուն: Մի քանի տեղ գործ են ածւած մեր լեզւի մի քանի ձևերը, որոնք կամ սխալ են կամ ցանկալի չեն (մարգիլներ, ապրաւ և ալլը): Նկատենք, որ Գերմանիա չի ունեցած մի կալսք (Խորերտ աւուհում) (երևս 5):

Գալով հեղինակին, նկատենք որ տպագրութեան գիւտի մէջ նա աւելի մեծ տեղ է աւած կրօնականին և աստուածալինին, քան այդ հարկաւոր էր: Պէտք էր աւելի զրական աչքով նայել գործի վերայ և ներկայացնել Գուտտենբերգի գիւտը իբր

մի պարզ ձգտման արգասիք՝ տեխնիկական նորութիւն ստեղծել մի սիրած գործի համար, առանց շրջապատելու նորան ալ և ալ կրօնական խորհրդաւորութիւններով: Որ տպագրութեան գիւտից ամենից առաջ օգտւեցին կրօնական գրքեր հրատարակելու, այդ դեռ մի պատճառ չէ այդ գիւտի ծագման մէջ ուրիշ գորութիւն տեսնելու, քան ինչ տեսնւած է բոլոր ուրիշ գիւտերի հեղինակների մօտ: Գուտտենբերգը իւր ժամանակի ամենալաւ արհեստագետներից մէկն էր և միեւնոյն ժամանակ թէ գրասէր և գիտութիւնների տէր և թէ աղնակաւ ու միջոցների տէր մարդ էր, — պալմաններ, որոնք մեղնից մօտ 500 տարի առաջ միևնոյն անձի մէջ միացած դժւար էր գտնել: Մի ալըպիսի մարդ, որ ունենալ ոչ արտասովոր հնարագիտական խելք, բոլորովին բաւական էր տպագրութեան գիւտը աւելու համար, նաև առանց միջամտութեան խորհրդաւոր ոգիների և երազային երևոյթների:

Գրքուկը հետաքրքրական է նաև նորանով, որ ծանօթացնում է ժամանակակից քաղաքական և հասարակական մի քանի կողմերի հետ: